Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 4

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

24 նոյեմբերի 2015թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Նիստին մասնակցում էր տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակից Հովհաննես Օհանյանը:

Օրակարգում՝

1. **Պետական բյուջեով մարզին և համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորման և դրանց նպատակային օգտագործման մասին:**
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Հովհաննիսյան/
2. **Մարզի համայնքներում հողային պետական տեսչական ստուգումների արդյունքների և անելիքների մասին:**
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ.Կոստանդյան/
3. **Տեղեկատվություն ՀՀ օրենսդրական և գերատեսչական առանձին իրավական ակտերի և դրանցում կատարված փոփոխությունների մասին:**
/ Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Ասրյան/

Մարզխորհրդի նիստը բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյանը:

Օրակարգի առաջին՝ ,,**Պետական բյուջեով մարզին և համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորման և դրանց նպատակային օգտագործման մասին**,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Հովհաննիսյանը:

Օրակարգի երկրորդ՝ ,,**Մարզի համայնքներում հողային պետական տեսչական ստուգումների արդյունքների և անելիքների մասին**,, զեկուցումով հանդես եկավ *ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի* հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ.Կոստանդյանը:

Օրակարգի երրորդ՝ ,,**Տեղեկատվություն ՀՀ օրենսդրական և գերատեսչական առանձին իրավական ակտերի և դրանցում կատարված փոփոխությունների մասին**,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Ասրյանը:

Մարզխորհրդի նիստում մի շարք հանձնարարականներով հանդես եկավ մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը:
Օրակարգում ներառված հարցերի շուրջ ելույթներով և հարցադրումներով հանդես եկավ Տոլորս գյուղական համայնքի ղեկավար Մարատ Առաքելյանը, Շինուհայր գյուղական համայնքի ղեկավար Սմբատ Երեմյանը /կցվում են զեկուցումները և ելույթները/:
Մարզի խորհրդի նիստում հայտարարությամբ հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյանը:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ս. Խաչատրյան**

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55